Ջորջ Օրուել

Փղի սպանությունը

Մոուլմեյնում՝ Ստորին Բիրմայում, մեծ թվով մարդիկ էին ինձ ատում. դա միակ անգամն էր, երբ ես այնքան կարևոր էի, որ այդպիսի բան պատահեր ինձ: Ես ծառայում էի որպես ոստիկանության ենթասպա մի քաղաքում, որտեղ հակաեվրոպական կրքերը շատ սուր էին, թեև առանձնանում էին աննպատակ ու չնչին դրսևորումներով: Ոչ ոք համարձակություն չուներ զանգվածային անկարգություններ կազմակերպելու, բայց եթե եվրոպացի կինը միայնակ անցներ շուկայով, ինչ-որ մեկն անպայման նրա զգեստի վրա բետելի հյութ կթափեր: Որպես ոստիկան՝ ես ակնհայտ թիրախ էի և ծաղրանքների էի ենթարկվում, երբ թվում էր՝ այդպես վարվելն անվտանգ էր: Երբ որևէ ճարպիկ բիրմացի ֆուտբոլի դաշտում տապալում էր ինձ գետնին, իսկ մրցավարն (մեկ այլ բիրմացի) այլ ուղղությամբ էր նայում, ամբոխը սոսկալի ծիծաղով էր բռնկվում: Մեկ անգամ չէ, որ նման բան է պատահել: Ի վերջո, ամենուր հանդիպող՝ քմծիծաղը դեղին դեմքերին դաջված երիտասարդներն ու անվտանգ հեռավորությունից իմ հետևից հնչող վիրավորանքները սկսեցին ուժեղ ազդել նյարդերիս վրա: Իսկ ամենից վատը երիտասարդ բուդդիստ քահանաներն էին: Քաղաքում մի քանի հազար քահանա կար, և թվում էր՝ նրանցից ոչ ոք այլ անելիք չուներ, քան կանգնել փողոցի անկյուններում ու ծաղրել եվրոպացիներին: Այս ամենը շփոթեցնում ու հիասթափեցնում էր: Քանզի այդ ժամանակ ես արդեն որոշել էի, որ իմպերիալիզմը չարիք է, և որքան շուտ հրաժեշտ տայի աշխատանքիս, այնքան լավ: Տեսականորեն և, իհարկե, գաղտնի կերպով, ես ամբողջությամբ բիրմացիների կողմնակիցն էի և դեմ էի նրանց նկատմամբ ճնշումներ գործադրողներին՝ բրիտանացիներին: Ինչ վերաբերում էր իմ կատարած աշխատանքին, ես ավելի ուժգին էի այն ատում, քան կարող եմ նկարագրել: Այդպիսի աշխատանքում մոտ հեռավորությունից ես տեսնում Կայսրության կեղտոտ աշխատանքը: Բանտերի հոտած խցերում խցկված թշվառ բանտարկյալները, երկարաժամկետ դատապարտյալների մոխրագույն, ահաբեկված դեմքերը, բամբուկներով ծեծի ենթարկված մարդկանց սպիապատ հետույքները. այս ամենը ճնշում էր ինձ մեղքի անտանելի զգացումով: Սակայն չէի կարողանում գլուխ հանել այդ ամենից: Ես երիտասարդ էի ու թերուս, ստիպված էի իմ խնդիրների մասին մտածել

կատարյալ լռության մեջ, որին դատապարտված էր Արևելքում ապրող յուրաքանչյուր անգլիացի: Ես պատկերացում չունեի, որ Բրիտանական կայսրությունը փլուզվում էր, իսկ այն երիտասարդ կայսուրությունները, որ պիտի փոխարինեին նրան, շատ ավել վատն էին լինելու: Միայն գիտեի, որ խրված էի իմ ատելության, որ տածում էի Կայսրության նկատմամբ, որին ծառայում էի, և այն ցասման միջև, որ զգում էի չարակամ փոքրիկ գազանների դեմ, ովքեր փորձում էին անհնար դարձնել աշխատանքս: Գիտակցությանս մի մասը կարծում էր, որ բրիտանական ռաջը անսասան բռնապետություն էր՝ բռնի ուժով saecula saeculorum պարտադրված ոտնահարված ժողովուրդներին, իսկ մյուս մասով մտածում էի, որ աշխարհի մեծագույն ուրախությունը կլիներ սվինը բուդդիստ քահանայի աղիքների մեջ մխրճելը: Նմանատիպ զգացումները իմպերիալիզմի սովորական կողմնակի հետևանքներն են: Կարող եք հարցնել ցանկացած անգլո-հնդկական ծառայողի, եթե կարողանաք աշխատանքից դուրս բռնեցնել նրան: Մի անգամ պատահեց մի բան, որ անուղղակի կերպով լուսավորեց ինձ: Դա ինքնին փոքրիկ միջադեպ էր, սակայն այն լույս սփռեց իմպերիալիզմի իրական բնույթի և իրական շարժառիթների վրա, որոնց հիման վրա գործում են բռնապետական կառավարությունները: Մի օր՝ վաղ առավոտյան, քաղաքի մյուս ծայրում գտնվող ոստիկանական բաժանմունքի ենթաքննիչը զանգահարեց ինձ և ասաց, որ ինչ-որ փիղ ավերում էր շուկան: Կարո՞ղ եմ արդյոք գնալ և ինչ-որ բան անել: Ես չգիտեի՝ ինչ կարող էի անել, սակայն ցանկանում էի տեսնել՝ ինչ էր կատարվում: Նստեցի պոնիի վրա և ճանապարհ ընկա: Վերցրեցի հրացանս՝ 44 տրամաչափի հին Վինչեսթերս, որ չափազանց փոքր էր փիղ սպանելու համար, սակայն մտածեցի, որ աղմուկը կարող էր օգտակար լինել in terrorem: Բազմաթիվ բիրմացիներ ճանապարհին կանգնեցնում էին ինձ և պատմում փղի գործողությունների մասին: Դա, իհարկե, վայրի փիղ չէր, այլ վարժեցրած փիղ, որի մոտ սկսվել էր «որսաշրջանը»: Այն շղթայված էր եղել (ինչպես բոլոր վարժեցրած փղերն են միշտ լինում, երբ մոտենում է այդ հարձակման շրջանը), սակայն անցած գիշեր կոտրել էր շղթան ու փախել: Նրա տերը՝ միակ մարդը, որ կարող էր կառավարել նրան այդ վիճակում, նրա հետևից էր ընկել, սակայն սխալ ուղղությամբ էր գնացել և այժմ գտնվում էր տասներկու ժամվա հեռավորության վրա, իսկ առավոտյան փիղը հանկարծ նորից հայտնվել էր քաղաքում: Բիրմացի բնակչությունը զենք չուներ ու լիովին անօգնական էր նրա դեմ: Փիղն արդեն ավերել էր ինչ-որ մեկի բամբուկե խրճիթը, սպանել էր ինչ-որ կովի, հարձակվել էր մրգի

մի քանի կրպակների վրա և խժռել էր պտուղները, ինչպես նաև հանդիպելով քաղաքային աղբատար մեքենային՝ շուռ էր տվել մեքենան և վայրենություններ էր արել դրա հետ այն բանից հետո, երբ վարորդը դուրս էր ցատկել ու կրնկակոխ փախել: Բիրմացի ենթաքննիչը և մի քանի հնդիկ ոստիկաններ ինձ էին սպասում այն թաղամասում, որտեղ տեսել էին փղին: Դա մի շատ աղքատ թաղամաս էր՝ արմավենիների տերևներով ծածկված ու սարալանջին շարված կեղտոտ, բամբուկե խրճիթների լաբիրինթոս: Հիշում եմ, որ ամպամած, տոթ առավոտ էր, անձրևային եղանակների սկիզբը: Մենք սկսեցինք հարցաքննել մարդկանց՝ պարզելու, թե ուր էր գնացել փիղը, և, ինչպես միշտ, չկարողացանք որևէ հստակ տեղեկություն ձեռք բերել: Արևելքում միշտ է այդպես. հեռավորության վրա պատմությունը բավականաչափ պարզ է թվում, սակայն որքան մոտենում ես դեպքի վայրին, այնքան այն ավելի մշուշոտ է դառնում: Որոշ մարդիկ ասացին, որ փիղը գնացել է մի ուղղությամբ, ոմանք՝ մեկ այլ ուղղությամբ, ոմանք էլ պնդում էին, որ չեն էլ լսել ոչ մի փղի մասին: Ես գրեթե որոշել էի, որ ողջ պատմությունը ստերի կույտ է, երբ քիչ հեռվից ճիչեր լսեցինք: Ինչ-որ մեկը բարձրաձայն ու վրդովված ճչում էր. «Հեռացե՛ք այստեղից, երեխանե՛ր: Գնացե՛ք հենց հիմա»: Եվ մի ծեր կին՝ մտրակը ձեռքին, առաջ եկավ խրճիթի անկյունից՝ կատաղի կերպով քշելով մերկ երեխաների ամբոխին: Նրան հետևեցին նաև այլ կանայք՝ գոռալով ու ճչալով. ակնհայտ էր՝ կար մի բան, որ երեխաները չպետք է տեսնեին: Ես շրջանցեցի խնճիթը և տեսա ցեխի մեջ փռված մարդու դիակ: Նա հնդիկ էր, սևամորթ դրավիդյան կուլի : Գրեթե մերկ էր. պետք է որ կարճ ժամանակ առաջ մահացած լիներ: Մարդիկ ասացին, որ փիղը խրճիթի անկյունից անսպասելի հարձակվել էր նրա վրա, բռնել էր նրան կնճիթով, ոտքը դրել մեջքին և ճզմել նրան հողի մեջ: Անձրևոտ եղանակ էր, գետինը փափուկ էր, և նրա դեմքը մի ֆունտ խորությամբ ու մի քանի յարդ երկարությամբ խրվել էր հողի մեջ: Նա պառկած էր փորի վրա, ձեռքերը՝ խաչված, իսկ գլուխը՝ ընկած մի կողմի վրա: Գլուխը պատված էր ցեխով, աչքերը լայնաբաց էին, ատամները՝ մերկացած անտանելի տառապանքի արտահայտությամբ: (Երբեք չասեք ինձ, ի դեպ, թե մահացած մարդիկ խաղաղ տեսք ունեն: Իմ տեսած դիակների մեծամասնությունը դիվական տեսք է ունեցել:) Հսկայական կենդանու ոտքի հարվածը այնպես էր հեռացրել նրա մեջքի մաշկը, ինչպես նապաստակի կաշին են հեռացնում: Հենց տեսա մահացած մարդուն, հանձնակատար ուղարկեցի մոտակայքում բնակվող ընկերոջս տուն՝ փիղ որսալու հրացան բերելու: Ես արդեն

հետ էի ուղարկել պոնիին՝ չցանկանալով, որ նա, զգալով փղի հոտը, խելագարվի ու ցած նետի ինձ:
Հանձնակատարը վերադարձավ մի քանի րոպեից՝ հրացանով ու հինգ փամփուշտներով, իսկ մինչ այդ մի քանի բիրմացիներ եկել էին ու ասել մեզ, որ փիղը ներքևի բրնձի դաշտերում էր՝ ընդամենը մի քանի հարյուր յարդ հեռու: Երբ սկսեցի քայլել այդ ուղղությամբ, բառացիորեն թաղամասի ողջ բնակչությունը դուրս թափվեց տներից և հետևեց ինձ: Նրանք տեսել էին հրացանը, և բոլորը ոգևորված գոռում էին, որ ես պատրաստվում էի կրակել փղին: Նրանք առանձնապես մեծ ուշադրություն չէին դարձրել փղին, երբ այն ավերում էր իրենց տները, սակայն ամեն ինչ այլ էր հիմա, երբ նրան պատրաստվում էին սպանել: Նրանց համար դա զվարճալի էր, ինչպես կլիներ անգլիական ամբոխի համար. բացի այդ, նրանք փղի միսն էին ուզում: Այդ ամենի պատճառով ես փոքր-ինչ անհանգիստ էի: Ես փղին կրակելու մտադրություն չունեի. ընդամենը հրացանի հետևից էի ուղարկել անհրաժեշտության դեպքում ինքնապաշտպանության դիմելու համար: Բացի այդ, միշտ էլ նյարդերիդ վրա ազդում է, երբ ամբոխը քեզ է հետևում: Ես բլուրով քայլեցի ցած՝ հիմարի տեսք ունենալով ու զգալով ինչպես հիմար, հրացանը՝ ուսիս, իսկ անընդհատ աճող մարդկանց բանակը տրորում էր կրունկներս: Ներքևում, երբ խրճիթներն արդեն հետևում էին, խճապատ ճանապարհ էր, իսկ դրանից այն կողմ՝ հազարավոր յարդերի վրա, բրնձի անմշակ ճահճապատ դաշտեր էին՝ դեռևս չհերկված, սակայն թրջված առաջին անձրևներից և տեղ-տեղ ծածկված կոպիտ խոտով: Փիղը կանգնած էր ճանապարհից ութ յարդ հեռավորության վրա՝ ձախ կողմով դեպի մեզ: Նա ամենափոքր ուշադրությունն անգամ չդարձրեց մեզ: Փոխարենը պոկում էր խոտի խրձերը, դրանք մաքրելու համար հարվածում էր ծնկներին և խցկում բերանը:
Ճանապարհի վրա ես հապաղեցի: Փղին տեսնելուն պես ես կատարյալ վստահությամբ գիտեի, որ չպետք է կրակեմ նրան: Աշխատանքային փղին սպանելը լուրջ հարց է: Դա կարելի է համեմատել հսկայական թանկարժեք մեքենա ոչնչացնելու հետ, և ակնհայտ է, որ նման բան չի կարելի անել, եթե դրանից կարելի է խուսափել: Իսկ այդ հեռավորության վրա փիղը, որ հանդարտ ուտում էր, ոչ ավելի վտանգավոր էր թվում, քան սովորական կովը: Այդ ժամանակ, և նաև հիմա, ես կարծում էի, որ նրա «որսաշրջանը» արդեն անցնում էր, որի դեպքում նա պարզապես անվնաս թափառելու էր, մինչև տերը գար ու բռներ նրան: Ավելին, ես ամենափոքր ցանկությունն իսկ չունեի

նրան սպանելու: Ես որոշեցի մի փոքր հետևել նրան ու համոզվել, որ նա նորից չի կատաղում, և ապա տուն գնալ:
Սակայն այդ պահին ես նայեցի շուրջս՝ այն ամբոխին, որ հետևել էր ինձ: Դա մի հսկայական բազմություն էր՝ ամենաքիչը երկու հազար մարդ, որոնք աճում էին ամեն րոպեի հետ: Ամբոխը ճանապարհի երկայնքով երկու կողմից արգելափակել էր այն: Ես նայեցի դեղին դեմքերի ծովին, որ երևում էր վառ հագուստների վերևում՝ երջանիկ ու տեղի ունեցող զվարճանքից ոգևորված դեմքեր, բոլորն այն համոզմամբ, որ փղին պատրաստվում են սպանել: Նրանք այնպես էին հետևում ինձ, ասես ձեռնածու լինեի, ով պատրաստվում է հնարք ցուցադրել: Նրանք չէին սիրում ինձ, սակայն ձեռքիս ունենալով կախարդական հրացանը՝ ես ակնթարթորեն արժանացել էի նրանց ուշադրությանը: Եվ հանկարծ ես հասկացա, որ, այնուամենայնիվ, ստիպված պիտի լինեի սպանել փղին: Մարդիկ դա էին ակնկալում ինձնից, և ես ստիպված էի անել դա. ես զգում էի՝ ինչպես էր երկու հազար մարդու կամքի ուժն անկառավարելիորեն առաջ մղում ինձ: Եվ հենց այդ պահին էր, երբ ես կանգնած էի՝ հրացանը ձեռքերիս մեջ, որ առաջին անգամ զգացի Արևելքում սպիտակ մարդու տիրապետության դատարկ ու ապարդյուն լինելը: Ահա՝ ես՝ գործողության թվացյալ գլխավոր դերակատարը, հրացանը ձեռքիս կանգնած եմ անզեն տեղաբնակների ամբոխի առջև: Իսկ իրականում ես ընդամենը մի անհեթեթ տիկնիկ էի, որ առաջ ու հետ էր շարժվում հետևում հավաքված այդ դեղին դեմքերի կամքով: Այդ պահին ես հասկացա, որ այն, ինչ կործանում է սպիտակ մարդը բռնակալի վերածվելով, իր սեփական ազատությունն է: Նա դառնում է դատարկ ճկուն խրտվիլակ, սահիբի պայմանական կերպարանք: Քանզի նրա իշխանությունը ենթադրում է, որ նա իր ողջ կյանքը պիտի անցկացնի «բնիկների» վրա տպավորություն գործելու փորձեր կատարելով, և ուստի ցանկացած ճգնաժամային վիճակում ստիպված է անել այն, ինչ իրենից ակնկալում են «բնիկները»: Նա դիմակ է կրում, և նրա դեմքն աստիճանաբար հարմարվում է դրան: Ես ստիպված էի կրակել փղին: Հրացանի հետևից մարդ ուղարկելով ես ինքս ինձ դատապարտել էի անել դա: Սահիբը պարտավոր է վարվել սահիբի նման. նա պետք է վճռական տեսք ունենա, իմանա իր անելիքը և կոնկրետ գործողությունների գնա: Հրացանը ձեռքիդ այդքան ճանապարհ անցնել, երբ երկու հազար մարդ կրնկակոխ քայլում է հետևիցդ, և առանց որևէ բան անելու թուլակամորեն հետ քաշվել՝ ո՛չ, դա անհնար էր: Ամբոխը կծիծաղեր ինձ վրա: Իսկ իմ՝ և Արևելքում բնակվող ցանկացած սպիտակամորթի ողջ

կյանքը մի երկար պայքար էր՝ ծաղրի ենթարկվելուց խուսափելու: Այնուամենայնիվ, ես չէի ցանկանում սպանել փղին: Ես հետևում էի՝ ինչպես էր նա խոտի փունջը թափ տալիս ծնկների վրա՝ փղերին հատուկ տատիկական բարեսրտությամբ: Ինձ թվում էր՝ նրան սպանելը իսկական հանցագործություն կլիներ: Այդ տարիքում ես բծախնդիր չէի կենդանիներ սպանելու հարցում, սակայն երբեք չէի սպանել ու չէի ցանկացել փիղ սպանել: (Չգիտես ինչու, մեծ կենդանու սպանելը միշտ ավելի դժվար է թվում:) Բացի այդ, պետք էր հաշվի առնել նաև կենդանու տիրոջը: Կենդանի փիղն առնվազն հարյուր ֆունտ արժեր, մահացած փիղը կարժենար ճիշտ այնքան, որքան նրա ժանիքները՝ հինգ ֆունտ, հավանաբար: Սակայն ես պետք է արագ գործեի: Ես շրջվեցի դեպի փորձառու տեսք ունեցող մի քանի բիրմացիները և հարցրեցի, թե ինչպես էր փիղն իրեն պահել: Նրանք բոլորը նույն բանն ասացին. նա ոչ ոքի ուշադրություն չի դարձնում, եթե իրեն հանգիստ են թողնում, սակայն կարող է հարձակվել, եթե շատ մոտենաս: Ինձ համար լիովին պարզ էր՝ ինչ պետք է անեի: Պետք է մոտ քսանհինգ յարդ մոտենայի փղին ու ստուգեի՝ ինչպես է իրեն պահում: Եթե հարձակվեր, կարող էի կրակել: Եթե ուշադրություն չդարձներ, կարելի էր ապահով լինել ու թողնել նրան մինչ տիրոջ վերադարձը: Բայց ես նաև գիտեի, որ այդպիսի բան չէր լինելու: Ես վատ հրաձիգ էի, մյուս կողմից էլ՝ ամեն քայլափոխի փխրուն ցեխի մեջ մխրճվելու վտանգը: Եթե փիղը հարձակվեր, իսկ ես վրիպեի, ես փրկվելու նույնքան հնարավորություն կունենայի, որքան շոգեգլանի տակ հայտնված դողոշը: Բայց նույնիսկ այդ դեպքում ես իմ սեփական մաշկի մասին այնքան չէի մտածում, որքան հետևում գտնվող աչալուրջ դեղին դեմքերի մասին: Որովհետև այդ պահին՝ ամբոխի հայացքների ներքո, ես չունեի այն վախի զգացումը, որ կունենայի մենակ լինելու դեպքում: Սպիտակամորթը չպետք է վախենա «բնիկների» աչքերի առաջ և, ուստի, ընդհանուր առմամբ, նա անվախ է: Միակ միտքը, որ պտտվում էր ուղեղումս, այն էր, որ եթե ինչ-որ բան ձախողվեր, այդ երկու հազար բիրմացիները կտեսնեին ինձ հալածված, բռնված, ոտնատակ եղած, վերածված քմծիծաղը դեմքին դիակի, ճիշտ բլրի վրա գտնվող այն հնդիկի դիակի պես: Եվ եթե այդպես պատահեր, հավանական է, որ նրանցից ոմանք կծիծաղեին: Այդպիսի բան չի՛ կարող լինել: Միայն մի այլընտրանք կար: Ես փամփուշտները հրեցի պարկուճի մեջ և պառկեցի ճանապարհին, որպեսզի ավելի լավ նշան բռնեմ: Ամբոխը քարացավ, և անհամար կոկորդներից դուրս արձակվեց ծորը՝ ցածրաձայն ու երջանիկ հառաչ, ինչպես այն

մարդկանց մոտ, ովքեր տեսնում են թատրոնի՝ վերջապես բարձրացող վարագույրը: Ի վերջո, նրանք պատրաստվում էին վայելել իրենց հասանելիք զվարճանքը: Հրացանը գերմանական հրաշալի իր էր՝ օպտիկական նշանոցով: Այդ ժամանակ ես չգիտեի, որ փղին կրակելիս պետք է նշան բռնել մի ականջի խոռոչից մյուս ականջի խոռոչը ձգվող երևակայական գծի վրա: Հետևաբար, քանզի փիղը կողքի էր կանգնած, ես պետք է նշան բռնեի ուղիղ նրա ականջի խոռոչի վրա: Իրականում ես մի քանի դյույմ այն կողմ նշան բռնեցի՝ մտածելով, որ ուղեղը գտնվում է փոքր-ինչ առջևում:
Երբ քաշեցի ձգանը, ես չլսեցի կրակոցի ձայնը և չզգացի հարվածը (այդպես է, երբ կրակոցը հասնում է նշանակետին), բայց լսեցի սատանայական ուրախության ճիչերը, որ բարձրացան ամբոխի միջից: Հենց այդ վայրկյանին, այնքան արագ, որ կմտածես՝ նույնիսկ հրազենի գնդակը չի հասցնի տեղ հասնել, փղի հետ սարսափելի ու խորհրդավոր փոփոխություն տեղի ունեցավ: Նա ոչ շարժվեց, ոչ էլ ընկավ, սակայն նրա մարմնի յուրաքանչյուր գիծ փոխվել էր: Նա հանկարծ հիվանդ, կնճռոտված ու չափազանց ծերացած տեսք ստացավ, ասես գնդակի ահեղ ազդեցությունը, թեև նրան գետնին չէր տապալել, բայց կաթվածահար էր արել: Վերջապես (թվաց՝ երկար ժամանակ անց, այնինչ, ես կասեի, անցել էր ընդամենը մի քանի վայրկյան) թուլացած ընկավ ծնկների վրա: Բերանից թուք էր ծորում: Թվում էր՝ սարսափելի ծերության ճիրաններում էր հայտնվել: Ասես հազար տարեկան լիներ: Ես նորից կրակեցի նույն տեղին: Երկրորդ կրակոցից նա ցած չընկավ, այլ հուսահատ դանդաղությամբ ոտքի ելավ ու դժվարությամբ կանգնեց. ոտքերը երերում էին, գլուխը՝ ցած ընկնում: Ես երրորդ անգամ կրակեցի: Այդ կրակոցը վճռորոշ եղավ: Նրա ողջ մարմինը ցնցվում էր հոգեվարքի մեջ, և ոտքերում մնացած ուժի մնացորդները լքում էին նրան: Սակայն ընկնելիս մի պահ թվում էր, թե փորձում էր բարձրանալ, քանի որ երբ հետևի ոտքերը ծալվում էին, թվում էր, թե վեր է բարձրանում՝ նման շուռ եկող հսկայական ժայռի, կնճիթը, ինչպես ծառ, հասցնելով երկնքին: Նա շեփորի ձայն արձակեց՝ առաջին ու միակ անգամը: Եվ ապա փորը դեպի ինձ՝ ցած ընկավ մի այնպիսի թնդյունով, որ ասես ցնցեց գետինը նույնիսկ այնտեղ, որտեղ ես էի պառկած:
Ես կանգնեցի: Բիրմացիներն արդեն ցեխի միջով սլանում էին իմ կողքով: Ակնհայտ էր, որ փիղն այլևս երբեք ոտքի չէր կանգնի, թեև դեռ մահացած չէր: Նա շնչում էր շատ ռիթմիկ՝ երկար, ծանր հևոցներով, իսկ նրա հսկայական կողը ցավագին բարձրանում ու իջնում էր: Բերանը լայն բաց էր. ես տեսնում էի նրա կոկորդի գունատ վարդագույն

խոռոչը: Ես երկար ժամանակ սպասում էի, որ նա շունչը փչեր, սակայն նրա շնչառությունը չէր թուլանում: Ի վերջո, մյուս երկու փամփուշտները արձակեցի այն ուղղությամբ, որտեղ, իմ կարծիքով, պետք է նրա սիրտը լիներ: Արյան խիտ շերտը ալ կարմիր թավիշի նման դուրս հոսեց նրա մարմնից, սակայն այս անգամ ևս նա չմահացավ: Նրա մարմինը նույնիսկ չցնցվեց, երբ կրակոցները հասան նրան, իսկ տանջալից շնչառությունը շարունակվում էր: Նա մահանում էր դանդաղ ու ցավոտ հոգեվարքի մեջ, սակայն մի աշխարհում՝ ինձնից այնքան հեռու, որ ոչ մի փամփուշտ այլևս չէր կարող վնասել նրան: Զգում էի, որ պետք է վերջ դնեի այդ ահեղ աղմուկին: Սարսափելի էր այդ հսկայական գազանին այնտեղ պառկած տեսնել՝ անզոր շարժվելու և, միևնույն ժամանակ, անզոր մեռնելու, և ի վիճակի չլինել նույնիսկ նրա վերջը տալու: Ես ուղարկեցի փոքր հրացանիս հետևից, և փամփուշտը փամփուշտի հետևից արձակեցի նրա սրտի ու կոկորդի ուղղությամբ: Դրանք ասես ապարդյուն լինեին: Տանջալից հևոցները ժամացույցի տկտկոցների նման հետևում էին իրար: Ի վերջո, այլևս չդիմացա ու հեռացա: Հետո լսեցի, որ նա միայն կես ժամ հետո էր մահացել: Բիրմացիները սկսել էին բերել իրենց դանակներն ու զամբյուղները նույնիսկ մինչև իմ գնալը: Ինձ ասացին, որ մինչև կեսօր փղին մինչև ոսկորները մերկացրել էին: Հետո, իհարկե, հաջորդեցին փղի սպանության մասին անվերջ քննարկումները: Տերը կատաղած էր, բայց նա ընդամենը հնդիկ էր ու ոչինչ չէր կարող անել: Բացի այդ, իրավաբանորեն ես ճիշտ էի վարվել, քանզի կատաղած փղին պետք է սպանել, ինչպես կատաղած շանը, եթե տիրոջը չի հաջողվում կառավարել նրան: Եվրոպացիների շրջանում կարծիքները տարբեր էին: Ծերերի կարծիքով ես ճիշտ էի, իսկ երիտասարդներն ասում էին, որ խայտառակություն էր կրակել փղին կուլի սպանելու համար, որովհետև փիղն ավելին արժեր, քան ցանկացած անիծյալ կուլի: Ի վերջո, ես շատ գոհ էի, որ կուլին սպանվել էր. իրավական տեսանկյունից դա ինձ արդարացնում էր և բավարար պատճառ էր հանդիսանում փղին սպանելու համար: Ես հաճախ էի մտածում՝ արդյո՞ք որևէ մեկը հասկացել էր, որ ես այդպես էի վարվել բացառապես հիմարի կարգավիճակում չհայտնվելու համար:

Թարգմանությունը անգլերենից՝ Լիլիթ Հովհաննիսյանի